ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

2022թ. սեպտեմբերի 9-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 12-րդ դասարանի ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին բոլոր ծնողները, դասղեկ Լուիզա Աղաքարյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Դասարանի ծնողական խորհրդի և խորհրդի նախագահի ընտրություն:
2. 2022-2023 ուստարում ուսումնական գործընթացը կազմակերպելու հարցի քննարկում:

1.Լսեցին.- Դասարանի ծնողական խորհրդի և խորհրդի նախագահի ընտրության հարցը:

Ելույթ ունեցավ դասղեկ Լուիզա Աղաքարյանը՝ ներկայացնելով ծնողական խորհրդի ընտրության կարգը: Առաջարկվեց նոր ուսումնական տարվա համար ձևավորել 12-րդ դասարանի ծնողական խորհուրդ՝ նախագահ և չորս անդամ կազմով: Առաջարկվեց հինգ անդամների թեկնածություն:Նախագահի թեկնածու առաջադրվեց Արմինե Հարությունյանը, որից հետո կատարվեց քվեարկություն, որի արդյունքում միաձայն նախագահ ընտրվեց Արմինե Հարությունը:

Որոշեցին. - 12-րդ դասարանում ձևավորել ծնողական խորհուրդ հետևյալ կազմով.

1. Արմինե Հարությունյան /նախագահ/
2. Նոյեմզար Ավագյան /անդամ/
3. Վեհանուշ Բաղալյան /անդամ/
4. Լիլիկ Հովհաննիսյան /անդամ/
5. Թերեզա Սամսոնյան /անդամ/

2.Լսեցին.- 2022-2023 ուստարում ուսումնական գործընթացը կազմակերպելու հարցը:

Ելույթ ունեցավ դասղեկ Լուիզա Աղաքարյանը՝ նշելով, որ այս տարի նոր ուսումնական տարին Ծնողները հատուկ շնորհակալություն հայտնեցին դասղեկին՝ աշակերտներին ոգևորելու և գիտելիքի նկատմամբ սեր սերմանելու համար: Դասղեկ Լուիզա Աղաքարյանը տեղեկացրեց, որ սահմանվում է հնգօրյա աշխատանքային

ռեժիմ, դասերը սկսվում են 9:00-ին և ավարտվում են 15: 00- ին : Նա հրահանգեց, որպեսզի ծնողներն ուշադիր լինեն երեխաների ուսման հարցում, գրենական պիտույքների, համազգեստների և հաճախումների նկատմամբ: Տեղեկացրեց նաև, որ 1-ին կիսամյակը բաղկացած է 15 շաբաթից:

Որոշեցին.- Առավել ուշադիր և հետևողական լինել երեխաների ուսման հարցում: Պահել ուսուցիչ-աշակերտ-ծնող կապը, անհրաժեշտության դեպքում մեծացնել երեխաների վերահսկողությունը, որպեսզի կարողանան առավել արդյունավետ կազմակերպել ուսումնական գործընթացը:

Ծնողական խորհրդի նախագահ՝ Արմինե Հարությունյան

Քարտուղար՝ Նոյեմզար Ավագյան